# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 2 | Կոստյումը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից: Կոստյումը պետք է կարված լինի սև գույնի կիսաբամբակյա ջրայուղամեկուսիչ կտորից՝ բաղադրությունը՝ բամբակ 50% (±2%), պոլիէստեր 50% (±2%), իսկ խտությունը՝ 220-240 գ/մ2: Բաճկոնը պետք է ունենա 3 վրադիր գրպան, որից երկուսը կողային հատվածում, մուտքը թեք, մեկը՝ ձախ կրծքավանդակի հատվածում ուղիղ, կրծքավանդակի գրպանի վերին մասում պետք է կարված լինի լրացուցիչ վրադիր կտոր՝ նախատեսված «Անուն Ազգանվան» համար: Օձիքը՝ շրջվող, թևքերը՝ երկկարանի, օղակ կոճակով կոճկվող թեզանիքով, հետևամասը՝ վերին կտրվածքով: Բաճկոնը կոճկվում է կոճակներով: Բաճկոնի գոտկատեղը մշակվում է գոտիով, որի վրա կարվում է չափը կարգավորող ախլակ, 1 օղակ 2 կոճակով: Տաբատի ուրվագիծը՝ ուղիղ, կողքային վրադիր գրպաններով, մուտքը թեք: Գոտկատեղում մշակված է գոտին՝ կամրջակներով, կոճկվում է մեկ օղակ կոճակով, գուլֆիկը 3 օղակ կոճակով: Գոտու վրա տեղադրված է չափսի կարգավորման 2 ախլակ 1 օղակ 2 կոճակով: Կեպին բաղկացած է թասակից և երկարացված գլխարկահովհարից: Ետևի հատվածում չափսի կարգավորման հնարավորությամբ: Յուրաքանչյուր հագուստի կոմպլեկտ պետք է ունենա բաճկոնի ներսի կողմում կարված պիտակ ՔԿԾ գրառմամբ: Հագուստի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը: Հանդերձանքի նմուշը համաձայնեցնելուց հետո Գնորդի կողմից Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին |

| | |
|---|---|
| | պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1հատ կոստյում: Հակերը պիտակավորված: Պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 2 | |